

ՄԱՐՏԻՐՈՍ ՍԱՐՅԱՆԻ ԱՆՏԻՊ ՆԱՄԱԿՆԵՐԻՑ

Ինչպես հայտնի է, 1921 թ. Մ. Սարյանը իր հայրենակից ու մտերիմ ընկեր Ալեքսանդր Մյասնիկյանի հրավերով դալիս է Հայաստան և ընտանիքով հաստատվում Երևանում: Տեղափոխվելուց անմիջապես հետո, Խորհրդային Հայաստանի առաջին լուսժողովում Աշոտ Հովհաննիսյանի հրավերով, Մ. Սարյանը ստանձնում է նույն ժողովրդատի արվեստի գործերի խորհրդատուի պաշտոնը և եռանդուն մասնակցություն է ցուցաբերում լուսժողովրդատի իրավասության ենթակա Պետական թանգարանի հիմնադրմանը (1921 թ.): Թանգարանի կազմի մեջ մտնում է նաև գեղարվեստական (կերպարվեստի) բաժինը, որի հիմքի վրա հետագայում ստեղծվեց կերպարվեստի թանգարանը՝ Պատկերասրահը:

Մտահոգված լինելով հայ մտավորականության լավագույն ներկայացուցիչներին Հայաստանում կենտրոնացնելու հարցով՝ Մ. Սարյանը համապատասխան պաշտոնական անձանց խորհրդով և հանձնարարությամբ դիմում է Հայաստանից դուրս գտնվող իր ծանոթներին ու ընկերներին՝ հրավիրելով նրանց հայրենիքում աշխատելու:

Մինչև Հայաստան տեղափոխվելը Մ. Սարյանը ապրել և աշխատել էր Թիֆլիսում, էջմիածնում, Երևանում, Մոսկվայում, Ն. Նախիջևանում և այլուր: 1915 թ. Մոսկվայում ապրած ժամանակ Սարյանը սերտ կապերի մեջ է եղել Վալերի Բրյուսովի և նրա մոտ կանգնած այն հայ մտավորականների հետ (Վահան Տերյան, Պողոս Մակինցյան, Ցուլակ Խանդադյան, Կարեն Միքայելյան, Ալեքսանդր Ծատուրյան և ուրիշներ), որոնց խորհրդով ու աջակցությամբ հրատարակվեց «Поэзия Армении» ժողովածուն (1916 թ.): Թեև Մ. Սարյանը խմբագրական կազմի մեջ չի եղել, սակայն աջակցել է այդ շնորհակալ նախաձեռնության իրականացմանը:

Մ. Սարյանի նամակները բազմաթիվ տեղեկություններ են պարունակում հայ մշակութային կյանքի, իր արվեստի և այլ հարցերի վերաբերյալ:

Ստորև հրապարակում ենք մեծ գեղանկարչի թողած նամակագրական ժառանգության այն փոքր մասը, որ պահվում է Եղիշե Չարենցի անվան գրականության և արվեստի թանգարանի գրական բաժնի ձեռագրատան Ավետիք Իսահակյանի, Աննա Հովհաննիսյանի, Արշակ Չոպանյանի, Գարեգին Լևոնյանի, Երվանդ Շահազիզի, Կարեն Միքայելյանի, Հովսեփ Կուսիկյանի, Ոնոփրիոս Անոփյանի ֆոնդերում:

Գ. Հ. ԱԶՆԱՎՈՒՐՅԱՆ

1

Ոնոփրիոս Անոփյանին

1915, օգոստոսի 8, Ն. Նախիջևան

Սիրելի Ոնոփրիոս¹,

Հայտնում եմ քեզ ի գիտություն, որ Պողոս Մակինցյանը² սպասում է քո բանաստեղծություններին և դու պետք է շտապես ուրեմն³:

Հրատարակության գործը շատ լավ գնում է առաջ Валерий Брюсов-ի նրատարակության ձեռքին տակ, որը այնքան հետաքրքրվել է հայկական

բանաստեղծությունով, որ սովորում է հայերեն լեզու և արդեն արձակ կարգում է բառարանի միջոցով և միանգամայն հիացած է հին հայկական բանաստեղծություններով: Ես այժմ նախիջևանում եմ և մի քանի օրից զննում եմ էջմիածին:

Քո Մարտիրոս Սարյան

1 Ոնոփրիոս Անուփյան (1873—1934).—բանաստեղծ, թարգմանիչ, լրագրող:

2 Մակինջյան Պողոս (1884—1937).—գրականագետ-քննադատ, թարգմանիչ, պետական-կուսակցական գործիչ, Վալերի Բրյուսովի կազմած և 1916 թ. հրատարակած «Поэзия Армении» ժողովածուի խմբագրության անդամ:

3 Հստ Լրենոյթին սկզբում մտադրություն է եղել «Поэзия Армении» ժողովածուի մեջ տեղ տալ նաև Ո. Անուփյանի բանաստեղծություններին, սակայն այդ մտադրությունը չի իրականացվել:

2

Կարեն Միֆայելյանին

1916, ապրիլ, Թիֆլիս

Բարև Կարեն աղա¹,

Արդեն երեք շաբաթ կլինի ինչ որ Մոսկովից հեռացել եմ, բայց ժամանակ առ ժամանակ հիշում եմ և մտքով սավառնում եմ ղեպի հյուսիս:

Որ Թիֆլիս հասա իսկույն ևեթ զնացի Ե. Թադևոսյանի մոտ՝ իմանալու նկարների մասին, որոնք նա արդեն ուղարկել էր Մոսկով²:

Հետաքրքիր է ինչպես եք վերջնականապես որոշել շապիկի հարցը, նրկարների հարցը և առհասարակ ժողովածուի գործը ի՞նչ զրույթյան մեջ է և շուտով՝ արդյոք մոտավորապես, զուրա է գալու այդ գիրքը, որին այնքան են սպասում³:

Այստեղ հաստատվել է «Հայ նկարիչների միություն»-ի կանոնադրությունը և մոտ օրերս երեի կկայանա բնդհանուր ժողովը, սա կարող ես հայտնել ի գիտություն «Արմ. Вест.»

Կիրակի օրը պ. Ա. Սպենդիարյանի երաժշտական սիմֆոնիկ համերգն է կայանալու, որին ես «մասնակցելու եմ»՝ նստած ամֆիթիատրոնում:

Եթե աղաւթ ժամանակ գտնես թելեֆոնատան խոսակցություններից, իսկույն գրիր, ես անհամբեր սպասելու եմ քո նամակին, ի միջի այլոց ի՞նչ կսկսեմ իրտում⁵: Ստեփան աղային⁶ հարգանքներս և բարեկեցություն:

Մնամ քո Մարտիրոս

Հասցե. Тифлис. Кирпичный пер. д. 13, кв. Артемова, М. С. Сарьяну

1 Կարեն (Գևորգի) Միքայելյան (1883—1941).— գրող, թարգմանիչ, հրապարակագիր, լրագրող, մշակութային գործիչ, ՀՊԿ-ի ներկայացուցիչը Փարիզում:

2 Խոսքը Մոսկվայում պարբերաբար կազմակերպվող հերթական ցուցահանդեսին մասնակցելու համար Թադևոսյանի ուղարկած նկարների մասին է:

3 Ակնարկվում է «Поэзия Армении» ժողովածուն:

4 «Հայ նկարիչների միությունը» հիմնադրվել է 1916 թ. Թիֆլիսում: Նրա հիմնադիր անդամներից է Լեոն և Մ. Սարյանը:

5 Մոսկվայի Հայկական կոմիտեն հիմնադրվել է 1915 թ. Մեծ եղևունից փրկված զաղթա-

կաններին և որբերին օգնելու համար: Կ. Միքայելյանը եղել է հիշյալ կոմիտեին գործոն աջակցություն ցույց տվողներից մեկը:

6 Խոսքը վերահիշյալ կոմիտեի նախագահ, իրավարան, հասարակական-մշակութային գործիչ Ստեփան Մամիկոնյանի (1859—1921) մասին է: Այդ նույն կոմիտեի նյութական միջոց-ձեռնով է հրատարակվել «Поэзия Армении» ժողովածուն:

3

Երվանդ Շահազիզին

1922, փետրվարի 14, Երևան

Հարգելի Երվանդ Ակիմովիչ,

Պետական թանգարանը կազմակերպված է, որը բաղկացած է յոթ բաժիններից. 1) Գեղարվեստական, 2) Պատմահնագիտական, 3) Ազգագրական, 4) Արխիվ, 5) Գիտական գրադարան, 6) Հեղափոխության և 7) Ալեքսանդրապոլի թանգարանը, այս բոլոր բաժինները պետք է ունենան յուր վարիչները¹, որոնցից մեկը պետք է լինի Դուբ², Իհարկե, եթե դաք Երևան: Բաժինների վարիչներից մեկը կլինի ընդհանուր Պետական թանգարանի վարիչ, այդ պաշտոնը առաջմ տանում է Ե. Լալայանը: Թանգարանը ենթարկվում է Հնությանց և գեղարվեստական հուշարձանների պահպանության կոմիտեին, որի գործունեությունը տարածվում է պետության սահմաններում, որը միակ տերն է բոլոր հնություններին և գեղարվեստական հիշատակարաններին:

Ձեր վերաբերյալ հս խոսելի հմ այստեղ, թե՛ նախկին Լուսժողկոմի օրով, թե՛ հիմա և Լուսժողկոմի³ կողմից կարգադրություն է արված Հայաստանի կողմից Ն. Նախիջևանում գտնված ներկայացուցիչին, որ Թանգարանը ամբողջովին, բոլոր իրերով, ինչ որ կա, մինչև անգամ արխիվները և ազգագրական իրերը տեղափոխվեն Երևան և հատուկ կարգադրություն Ձեզ համար, որպիսով թանգարանի հետ Դուբ էլ դաք, այնպես որ Ձեզ բոլոր հնարավորությունը պետք է տան:

Կյանքը այստեղ ճիշտ է ծանր է, չեմ կարծում, որ ավելի ծանր լինի, քան թե Ռուսաստանում, բայց շատ բաներում անհամեմատ լավ է, առաջինը՝ կյանքը բովանդակալից է, ապահովության տեսակետից կասեմ, որ ամեն ծառայող ստանում է օրական երկու զրկանքա հաց և էն էլ լավ հաց:

Այստեղ հանդիպեցի Ձեր հղբորը⁴, որը ասեց, որ կարող եք ապրել նրա մոտ. այս հարցը Երևանում առաջին հարցն է—բնակարան չկա, և Երևան եկողը այդ տեսակետից պահանջկոտ չպետք է լինի:

Բարենհրա տիկնոջը⁵ և Ձեզ, Մ. Սարյան

1. Հայաստանի պետական թանգարանը հիմնադրվել է 1921 թ. վերջին:

2. Երվանդ Շահազիզը 1922 թ. Ն. Նախիջևանի թանգարանից Մ. Նալբանդյանի, Ռ. Պատկանյանի, Ն. Նախիջևանի քաղաքային մեզիստրատի Սմրատ Շահազիզի ֆոնդերը և այլ նյութեր տեղափոխել է Երևանի Պետական թանգարան և ինքն էլ նշանակվել այդ թանգարանի գրական արխիվի վարիչ. այդ պաշտոնում մնացել է մինչև 1935 թ.:

3. Խորհրդային Հայաստանի առաջին Լուսժողկոմը եղել է Աշոտ Հովհաննիսյանը, որին 1922 թ. փոխարինել է Պողոս Մակինցյանը:

4. Երվանդ Շահազիզը ունեցել է երկու եղբայր՝ Սիմոն և Արմենակ (բժիշկ), որն ապրել է Երևանում: Խոսքը հավանորեն վերջինի մասին է:

5. Հեղինե Սալթիկյան-Շահազիզը մանկավարժ և սիրող դերասանուհի էր: Նա Ռուստովում Պ. Աղամյանի հետ հանդես է եկել «Օթելլոյի» մեջ՝ կատարել Դեզդեմոնայի դերը:

4

Հովսեփ Կուսիկյանին

Երևան, 1924 24/II

Дорогой Иосиф Каралетович!

Очень благодарен Вам за Ваше письмо, на него я не ответил Вам сейчас же только потому, что вообще отвык от писмописания, а теперь, когда культурные условия улучшились и мы начали довольно быстро возвращаться из первобытного состояния к нашим временам, у меня явилось желание списаться с моими лучшими друзьями *Краснокаменной*¹. Я уверен, что мое письмо наверное попадет к Вам в руки, потому и пишу. Вас, конечно же, интересует то, что происходит теперь в Армении и в столице ее Эривани, а потому коротко, но все же считаю своим долгом написать кое-что об этой в самом деле разоренной стране. Но эти три года новой власти в лице лучших сынов народа, приложивших много мудрости и труда, страна быстро возрождается, крепнет экономически и культурно, здесь работа не за страх, а за совесть. Лукашин² оказался чудесным строителем и хозяйственником, его все любят и ценят. А наш Алешка³ крепко сидит в Тифлисе.

Не буду Вам перечислять подробности нашей жизни, ибо это очень много времени займет у Вас и может показаться скучным.

В декабре или январе я думал приехать в Москву, но письмо от редакции художественного журнала, изд[аваемого] в Москве, «Русское искусство», желающего посвятить номер журнала моим работам последних лет, и командировка в Эривань Максимилиана Волошина⁴ с целью на месте ознакомиться и собрать материалы для статьи и монографии обо мне задержали меня здесь, чтобы привести в относительный порядок свои впечатления, и проезд Волошина по соглашению отложен на апрель.

У меня к Вам две просьбы: первая—в Лазаревском Институте я оставил один ящик с моими незаконченными работами и этюдами на полечение Карена Микаеляна. В каком положении этот ящик? Вообще этот хлам интереса особенного не представляет, за исключением некоторых вещей, но мне они крайне нужны. Если этот ящик бережет Карен и ему не мешает он, прошу благосклонную опеку не снимать с него, в противном случае если у Вас найдется угол, возьмите к себе и берегите до моего приезда, или это можно сделать в другой форме—оставляю на Ваше усмотрение.

Вторая моя просьба к Вам следующая: В Москве группой художников и меценатов организовывалась выставка русской живописи в Америке. Я получил приглашение принять участие на этой выставке и изъявил желание участвовать шестью картинами, застрявшими до последнего времени из-за войны в Мальме (Швеция). В письме сообщалось, что для извлечения картин русск[их] художников из Мальме командировается Игорь Грабарь⁵, а потому на его имя нужно написать до-

веренность, что я и сделал и заказным письмом отправил в Москву. Очень прошу выяснить эти два вопроса и черкнуть мне несколько строк, чем меня очень обяжете. По второму вопросу два адреса:

- 1) Академия художественных наук.
- 2) Издательство Сытина.

Так ли, иначе я буду в Москве.

Привет маме и Гоарик.

Искренно уважающий Вас М. Сарьян

Армения, Эриван

Ул. Спандаряна № 80, М. Сарьяну

¹ Այդպես ժամանակին անվանել են Մոսկվա քաղաքը:

² Սարգիս Սրապիոնյան (1883—1937), նորաստեղծ Խորհրդային Հայաստանի նախ ժող-տնտիսորհի և ապա ժողկոմխորհի նախագահն էր:

³ Խոսքը Ալեքսանդր Մյասնիկյանի (1886—1925) մասին է:

⁴ Վոլոշին (Կիրիենկո) Մաքսիմիլիան Ալեքսանդրովիչ (1878—1932).— ռուս բանաստեղծ, նկարիչ և արվեստաբան:

⁵ Գրաբար Իգոր Էմանուելովիչ (1871—1960).— նկարիչ, արվեստի տեսաբան, ակադեմիկոս:

5

Արշակ Զոպանյանին

1924 թ. 10/07. Վենետիկ

Շատ հարգելի պ. Զոպանյան,

Շատ շնորհակալ եմ Ձեր տված տեղեկությունների [համար]՝ Տեր-Մարտիրոսյանի¹, Քուրքչյանի գործերի մասին², Ուրեմն հաշատուր Աբովյանի արձանի հարցը պետք է համարել վերջացած: Քուրքչյանի պատկերների վերաբերյալ ես գրեցի Բեռլին Փիրումյանին³, թեև պատասխան չեմ ստացել: Այս օրերս Երևանի նկարիչներից ստացա նամակ, որի մեջ գրում են, անհամբեր սպասում են Փարիզից նկարչական պիտույքներին⁴: Դուք առաջին նամակում հայտնել էիք, որ համաձայն իմ, Թամանյանի և Ախիկյանի⁵ դիմումին նամակով, սկսել եք հանգանակություն անել այդ նպատակի համար: Շատ լավ կըլիներ, եթե շուտով հավաքված գումարին առնէիք ներկեր, վրձիններ և այլն և ուղարկեիք Երևան, Հայաստանի օգնության կոմիտեի միջոցով: Փարիզի ներկայացուցիչն է Կարիքյանը⁶, կամ Բեռլինի ներկայացուցիչը կարելի է իմանալ ինչ ձևով ուղարկելը:

Հասցեն այսպես է. Berlin, Lindenstr. 20—25, Sakvneschtorg, Pirumoff.

Ես այստեղ մտադրություն ունեմ մինչև այս ամսի քսանը, հետո պիտի մեկնեմ Ֆլորենցիա և Հռոմ ու այնտեղից անմիջապես Մոսկվա⁷ ու Երևան:

Շատ ցավում եմ, որ չի հաջողվեց ինձ գալ Փարիզ և տեսնվել Ձեզ հետ ու անձամբ պատմել, թե ինչ եռուն շինարար գործ է կատարվում Հայաստանում և այս օրերին մասնակցելը այդ շինարար կյանքին մեծ երջանկություն է:

Ընդունեցեք խորին հարգանքներս, Ձերդ Մ. Սարյան

Երևանի Հասցեն՝ Լուսժողովրդատ Մ. Սարյանին

Эривань, Армения, У. Р. С. С. (Russie)

Նկարչական պիտույքները ուղարկել այս հասցեով.—Երևան, Լուսժողովրդատ, նկարչական դպրոց (Художественные мастерские).

1 Անվանի քանդակագործ Անդրեաս Տեր-Մարությանը (1871—1919) ժողովրդի հանգանակած գումարներով Փարիզում քանդակել էր և. Արուսյանի արձանը, Այն այժմ կանգնեցված է և. Արուսյանի տուն-թանգարանի մոտ (Քանաքեռ)։

2 Խոսքը վաղաժամ մահացած նկարիչ Լևոն Քյուրքճյանի (1872—1924) մասին է։

3 Սիմիոն Փիրումյանը (Փիրումով) Անդրկովկասյան ֆեդերացիայի արտաքին առևտրի ներկայացուցիչն էր։

4 Ա. Չոպանյանի արխիվային ֆոնդում (1-ին բաժին, №№ 2231, 2232) գրանցված են Ալ. Թամանյանի, Մ. Սարյանի, Վ. Ախիկյանի, Գ. Գյուրջյանի և Գ. Հովսեփյանի ստորագրությունները կբող, 1924 թ. հոկտեմբերի 19-ի և նոյեմբերի 5-ի դիմում-գրությունները՝ հասցեագրված Ա. Չոպանյանին՝ նրանք խնդրում են օգնել Հայաստանի նկարիչներին համապատասխան նկարչական նյութերով։

5 Վրթանես Ախիկյան (1872—1936).—Հայտնի նկարիչ և մանկավարժ։

6 Կարիքյանը ՀՕԿ-ի Փարիզի պատվիրակության ներկայացուցիչն է եղել, մեծահարուստ։

7 Մ. Սարյանը Մոսկվա է վերադարձել օգոստոսի սկզբին։

6

Ավետիք Խաճախյանին

1924, օգոստոսի 12, Մոսկվա

Սիրելի Ավետիք,

Դու չե՞ս բարեկանա, եթե ես քեզ այդպես դիմեմ, ուրիշ տեսակ ես չեմ երեվակայում իմ դիմումը գեղյի քեզ։

Այսօր իմ ճանապարհ ընկնելու օրիցս Գնացքը մեկնեց ձեր աչքի առաջ և այժմ ահագին տաբաժություն կա մեր մեջ, այս նամակս գրում եմ Մոսկվայից՝ Պողոս Մակինցյանի սենյակում, ինքն էլ ներկա է, պատկած հանգստանում է։ Ինչեիցե, այսպես թե այնպես, դանազան մարդկանց (իհարկե բարի) օգնություններ ընկա Բեռլին, որտեղ հանդիպեցի շատ համակրելի Սիմիոն Հակովբյանին¹, Սիմոնիկ Փիրումյանին, որտեղ մի օր ավելի մնալուց հետո մեկնեցի Մոսկվա։ Այստեղ ուրեմն հանդիպեցի Պողոսին, Ա. Կարինյանին, երկուսն ալ երկու կամ երեք շաբաթից հետո պետք է մեկնեն Հայաստան կամ Թիֆլիս։

Պողոսը գրադված է Հովհաննես Թումանյանի բանաստեղծությունները հրատարակելու գործով. Կարինյանը Անդրկովկասյան հանրապետությունների ներկայացուցիչ՝ Տեր-Գարրիկյանին փոխարինում է մինչև նրա վերադառնալը արձակուրդից։ Եթե Պողոսին նամակ գրելու լինես հասցեն այսպես է՝ Մոսկվա, Армянский пер. № 2 Арменторг, Павлу Макинцяну.

Ուրբաթ մտադրություն ունեմ մեկնել գեղյի Երևան, ուրեմն, եթե աստված հաջողի, ամսի քսանին կլինեմ Երևանում։

Այստեղ շարունակ պատմում եմ հին Խալիլի հրաշագործների մասին, որոնց գործերը տպավորվել են իմ ուղեղի մեջ և իսկապես ինձ երջանիկ եմ դրում, որ տեսա այդ բոլորը։

Բարենևրս տիկին Սոֆիկին, Վիդենին և ուսանողներին և ուհիներին, եթե տեսնես։

Համբույրներով՝ քո Մաքսիմոս Սարյան

Պողոսը շատ, շատ բարեւում է:

Սիրելի Ավո,

Այս բոսնիս Մարտիրոսը հայտնեց քո բարեւն ինձ, որ շատ կարոտով բնդունեցի: Ուրախ եմ, որ ողջ և առողջ ես: Շատ հաճախ եմ քո մասին մտածել և ուզել եմ գրել, բայց չի հաջողվել: Սիրելի Ավո, շատ ենք կարոտել քեզ, եթե արտասահմանը քեզ չի կլանել ամբողջովին, եկ մեր երկիրը ուրախացրու, բան շատ կղտնկա այստեղ: Գրիր մանրամասն քո մասին: Կարելի է ասել, որ համարյա թե տեղեկություն չունենք քո մասին:

Ես միշտ Մոսկվայում եմ, ծառայում եմ, նախկին Լազարյան ճեմարանի (այժմ Հայաստանի կուլտուրայի տուն) տեսուչն եմ: Հասցես՝ Армянский пер. № 2 «Дом культуры Армении», Карен Микаеляну.

Համբույրներով և շատ կարոտով՝ Կարեն

¹ Սիմոն Հակոբյան (1881—1937).—գրականագետ-քննադատ, երեանի պետական համալսարանի եվրոպական գրականության դասախոս: Հակոբյանը եղել է «Արեգ» (1922—1924 թթ., Վիեննա, Բեռլին) գրական-գիտական ամսագրի (ապա երկշաբաթեթերի) խմբագիր-հրատարակիչը:

7

Ավետիք Իսահակյանին

1924, սեպտեմբեր 2, Վենետիկ

Սիրելի Ավետիք,

Ես փոխադրեցի քո հասցեով 5 դուլար, շատ եմ խնդրում քեզ Ջակոմոլլիից (S. Moize)¹ վերցնես իմ պատկերների լուսանկարները՝ ամեն մեկից երկու կամ ավելի օրինակ և մի հատ կատալոգ ընդհանուր, եթե մեր մասն էլ միացված է նոր հրատարակության:

Պատկերներին քանակը ինը հատ է: Սրանից զատ ես քեզ զակաղնոյ նամակ էլ գրել եմ, որտեղ ավելի մանրամասն գրում եմ, եթե փողը հերիք անի մի երկու ավրում էլ ուղարկիր Վենետիկի տեսարաններով, որոնք տպված են պսպղուն թղթի վերա և արժեն մոտավորապես երեք լեռ: Ներքի, որ քեզ անհանգստացնում եմ, բարենևրա տիկնոջ, Վիգենին և օրիորդին ու երիտասարդ-ձերին:

Երեանի արևը տաք է արդեն, հավողը սկսել է հասունանալ...

Համբույրներով՝ Բո Մարտիրոս

¹ Վենետիկի լուսանկարիչ:

8

Ավետիք Իսահակյանին

1924, դեկտեմբեր 18, Երեան

Շատ սիրելի Ավետիք,

Քո տղարկած լուսանկարները, կատալոգը, Վենետիկի ավրումները և բո, իմ ու քո բնտանիքի լուսանկարները ստացա մեծ շնորհակալությամբ:

Քեզ հետաքրքրող հարցին քո հղբոր որդու՝ վերաբերյալ, առայժմ Թոթո-

վենցի միջոցով իմացա միայն, որ այդպես ուսանող համալսարանում կա, բայց մինչև օրս չի պատահել անձամբ և չի խոսել հետը, ես խնդրեցի, որ ուղարկի ինձ մուտ, ուրեմն նրա մասին նոր տեղեկություններ հետևյալ նամակով:

«Կարմիր արև» դասագրքերը², Մոսկվանը կարգադրեց Պետհրատի վարիչին, որ ուղարկի քեզ:

Ստեփան Զորյանը³ խոստացավ յուր «Ցանկապատը» ուղարկել, նույնը Վահան Թոթովենցը յուր «Սեղբոսի»⁴ վերաբերյալ, իսկ Դերենիկի «Քաջ Նաղարը» առանձին գրքույկով դեռ լույս չի տեսել:

Դերենիկը Երևանում է և որոնում է սենյակ, այս օրերը երևի կլինի ինձ մոտ:

Երեկ չէ մյուս օրը Պետական թատրոնում Կ. Մելիք-Շահնազարյանի⁵ 50-ամյա գրական և 40-ամյա գյուղատնտեսական գործունեության պատվո երեկոն էր: Բավականին անգույն անցավ, սարքողները իրենց անշնորհքությունը ցույց տվեցին, նույնը և խոսողները, բացի Սարգիս Աբովյանից⁶ և կոնցերտային բաժնից:

Ուրեմն այդպես, Ավետիք ջան, եթե Երևանում բնակարանային կրիդիս չլինեք, ես կասեի, որ անմիջապես արի Երևան, որովհետև բացի քեզանից հայ ժողովրդի հարազատ մտավորականությունը ամբողջովին այստեղ է, իհարկե քեզ համար տեղ կգտնվի, բայց ես կարծում եմ, որ մինչև այդ հարցը չլուծվի գոնե փոքր չափով, չպետք է գաս, որովհետև քո հասակում ուսանողական կյանք վարելը դժվար կլինի: Ես ինքս նոր կարողացա տրոշ չափով հարմար բնակարան ճարել, չորս տարի տանջվելուց հետո: Ու այսպես թե այնպես պիտի սկսեմ աշխատել, որպեսզի Փարիզի ցուցահանդեսին նոր բաներ էլ տամ, ինչպես երեւում է Վենետիկի նկարները գնալու են այնտեղ:

Մինչև հիմա Վենետիկից լուր չկա, էն ծախված պատկերի փողը չեմ ստացել, որուն շատ պետք ունեմ:

Ուրեմն այդպես, շատ-շատ եմ հիշում մեր Վենետիկի կյանքը և Իտալիո արվեստի հրաշալիքները, Ռենեսանսի աստվածային շրջանը և մեր ժամանակների անգույնությունը արվեստի ասպարեզում:

Նամակներ սբանից հետո խնդրում եմ ուղարկես ոչ Լուսժողկոմատի հասցեով, այլ ուղղակի ինձ՝ Эривань, Армения, Ռուբենի փող. № 55, ինձ:

Հնդունիւր սրտագին բարենեքս, քն Մաքսիմոս

1 Խոսքը Վարպետի Գևորգ Եղբոր որդու՝ Արաս Իսահակյանի (1900—1976) մասին է:

2 «Կարմիր արև» դասագիրքը խորհրդային իշխանության առաջին տարիներին կաղմվեց 1—6-րդ դասարանների համար:

3 Ստ. Զորյանի (1890—1967) «Ցանկապատը» ժողովածուն լույս է տեսել 1923 թ. Երևանում, որի մասին Իսահակյանը դրական կարծիք է հայտնել 1924 թ. նոյեմբերի 12-ին Վենետիկից Մ. Սարյանին հղած նամակում (տե՛ս Ավ. Իսահակյան, Երկեր, հատ. 6, էջ 193—200):

4 «Սեղբոսը» լույս է տեսել 1923 թ. Երևանում: Նույն նամակում Վարպետը ցանկություն է հայտնել ունենալու այդ գիրքը ևս:

5 Գոստանդին Մելիք-Շահնազարյան (1857—1946).—գյուղագիր, գյուղատնտես: Գրական-նության պատմության մեջ հայտնի է Տմբլաշի հաչան ծածկանունով:

6 Սարգիս Աբովյան.—գյուղատնտես, կրթական գործիչ:

9

Կարեն Միֆալեյանին

1925, փետրվար 9, Երևան

Սիրելի Կարեն,

Քեզ մի խնդիր ունեմ, որը կարծում եմ քեզ չպետք է ծանուցյուն տա. վենետիկի պատկերահանդեսի նկարները վերադարձրել են Մոսկվա, ես նամակ գրեցի ընկ. Տեր-Գաբրիելյանին, որ ստանա մեր նկարները և հանձնի ԴԿԱ-ին¹, որպեսզի Ձեր միջոցով ուղարկվի Երևան, իրերի հետ ուղարկես հոս. Բանը նրանումն է, որ իմ նկարները ուղում են Մոսկվայի ցուցահանդեսի համար, կարելի էր տալ և հետո ետ վերցնել և ուղարկել Երևան՝ ինձ, այստեղ շրանք անհրաժեշտ են ապրիլ 15-ին մեր գարնանային պատկերահանդեսի համար, ինչդրում եմ չծուլանա հայտնել:

Քն Մարտիրոս

Երևան, Ռուբենի 55, Մ. Սարյան

¹ ԴԿԱ—Հայաստանի կուլտուրայի տուն:

10

Ավետիֆ Իսահակյանին

1925, ապրիլ 22, Մոսկվա

Շատ սիրելի Ավետիք,

Բավականին ժամանակ է քեզանից նամակ չունեմ, չգիտեմ ինչի վերադրել: Հուլիսով եմ, որ սրա պատասխանը կգրես:

Լսեցի, որ «Ուստա Կարոն» ավարտել ես և ուղում ես տպագրել վենետիկում, ճիշտ է արդյոք: Ես գրի եմ առել իմ ճանապարհորդական տպավորություններս «Երևանից մինչև Հոռովմ», որը երևի կկարդաս դու «Նորքում»:

Բոլոր դասագրքերը, Զորյանի «Ցանկապատը» և Վ. Թոթովենցի «Սեղ-բոսը» քեզ ուղարկված են, ստացա՞ր արդյոք:

Եղբորդ որդին ուսանում է Երևանի համալսարանում՝ Երրորդ կուրսի ուսանող է և լավ տղա է ասում են, բայց ինձ մոտ չեկավ, որ մի անգամ երեսը տեսնեի և քո մասին պատմեի, Թոթովենցը ասում է շատ համեստ և ամաչկոտ տղա է:

Գաբրիել վարդապետին² ասա, որ ես շատ եմ խոսել նրա մասին: Հոս Լեոնիդների համար թույլտվություն ստանալու մեկ ճանապարհ կա. պետք է դիմել այդտեղի խորհրդային ներկայացուցիչներին, որոնք իրենց հերթին դիմումը ուղարկում են Մոսկվա, Մոսկվան էլ հարցնում է Երևանին, այդ ուղղությամբ թող աշխատի, գուցե մի բան դուրս գա:

Դժբախտ լուրը Ալ. Մարտունու (Մյասնիկյանի) մասին իհարկե քեզ հասավ, դա շատ մեծ հարված էր խորհրդային Հայաստանին և Անգրկովկասյան միության: Իհարկե կյանքը գնում է առաջ, նոր մարդիկ կգան ասպարեզ, բայց այդ կորուստը շատ մեծ էր և անփոխարինելի: Մխիթարականը այն է, որ երկիրը վերակենդանանում է, աշխատասեր և տոկուն հայ ժողովուրդը յուր շինարարական աշխատանքին է նվիրվել, ուրեմն տխրիլ չպիտի:

Ես եկած եմ Մոսկվա մի քիչ ժամանակով, մասնակցելու եմ այստեղ պատկերահանդեսին՝ իմ նոր և վենետիկյան աշխատանքներով: 1926 թվի

ցուցահանդեսին, եթե ճակատագրված է, նորից կհանդիպենք³ և էլի առիթ կունենաս վրաս ծիծաղելու Բանյոյի Կաբինեի համարը մոռանալու համար, լավ էր ծովափում⁴:

Քեզ էլի պետք է անհանգստացնեմ, ուղարկելով հինգ դուլլար, կիսնդրեի քեզ ուղարկել ցուցակս ներկայացրած գրքերը, որոնց մեջ իմ նկարները կամ իմ մասին ինչ-որ բան կա գրված. հետո երկու օրինակ ցուցահանդեսային կատալոգի վերջին հրատարակության: Եթե էլի հետաքրքիր բան կա, ուղարկիր, եթե քո փողերից ծախսես, գրիր, ես անմիջապես փողը կուղարկեմ: Գրքերը ուղարկիր հետևյալ հասցեով՝ Մոսկվա, Большой Сергиевский пер. д. № 7, кв. 5. Иосифу Кусикьяну, նա ինձ կհանձնի: Մոսկվա շատ շուտ կստացվի և դու էլ իմ նամակը շուտ կստանաս:

Իսկ նամակ գրիր Երևան: Ս. Ր. Տ. Տ. Via Moscou

Армения, Эривань, Ռուբինի 55. Մարտիրոս Սարյանին

Եթե Հայաստանի հրատարակություններից քեզ մի բան հետաքրքրում է, գրիր, կուղարկեմ:

Բարենեղու տիկնոջ և Վիդենին ու ուսանողներին:

Համբույրներով քո Մարտիրոս Սարյան

1 Մ. Սարյանի «Ճամփորդական տպավորությունները» տպագրված են 1925 թ. «Նորք» հանդեսի 5—6-րդ միացյալ գրքում, էջ 331—342:

2 Վենետիկի Մխիթարյան միաբաններից:

3 Մ. Սարյանը 1926 թ. ամռանը մեկնել էր Փարիզ, որտեղ մնացել է մինչև 1928 թ. մարտ ամիսը՝ իր վարպետությունը կատարելագործելու և ցուցահանդեսներին մասնակցելու համար:

4 Ակնարկը վերաբերում է Վենետիկի ծովափում տեղի ունեցած դվարձալի դեպքերին: Այդ մասին հիշատակություն կա նաև Իսահակյանի նրկերի 6-րդ հատորում՝ Մ. Սարյանին հասցեագրված մի նամակում (էջ 209—210):

11

Գարեգին Լևոնյանին

1926. սեպտեմբեր 8, Փարիզ

Սիրելի Գարեգին,

Ի՞նչ ես անում, ո՞նց ես, ի՞նչ կա Երևանում: Գրիր ինչպե՞ս է նկարիչների ընկերության գործը: Իմ նամակ չգրելու պատճառը, ուզում էի այստեղ «Անի» կոչված ընկերության¹ մեջ զեկուցում անելի, ավելի մոտից ծանոթանալի, բայց մինչև այժմ չհաջողվեց և ես էլ սառեցի դրանցից որոշ չափով: Անձամբ տեսնվեցի Շահինի², Փուշմանի³ և Խաչատուրյանի⁴ հետ: Փուշմանը ասում են շատ հարուստ մարդ է և մեկնում է Ամերիկա, որտեղ միշտ ապրում է: Ուզում են իրենց ցուցահանդեսը սարքեն:

Գրիր Գարեգին ջան, ինչ ես անում և ինչ կա այդտեղ: Ոչ ոքից դեռ Երևանից նամակ չունեմ, բարեկիր բոլորին, գրիր:

Քն Մ. Սարյան

M. Sarian

69, rue du Cardinal

Lemoine, Paris.

1 «Անի» նկարիչների ընկերությունը հիմնադրվել է Փարիզում, 1926 թ.: Նրա հիմնադիրները եղել են անվանի նկարիչներ էդդար Շահինը, Հովսեփ Փուշմանը, Սարգիս Խաչատուրյանը,

Ռաֆայել Շիշմանյանը և ուրիշները Ընկերության նպատակն է եղել կազմակերպել Սփյուռքում ապրող նկարիչների ցուցահանդեսներ, ղեկուցումներ նրանց ստեղծագործությունների շուրջը և այլն:

2 Էդգար Շահին (1874—1947).—ականավոր հայազգի նկարիչ, ապրել և աշխատել է Փարիզում:

3 Հովսեփ Փուշման (1877—1966).—ականավոր հայազգի նկարիչ, սկզբում ապրել է Փարիզում, իսկ հետագայում՝ Նյու Յորքում:

4 Սարգիս Խաչատուրյան (1886—1947).—անվանի նկարիչ, ապրել և աշխատել է Թուրքիայում, Եգիպտոսում, Իրանում, Հնդկաստանում, Յրանսիայում, Անգլիայում, ԱՄՆ-ում և այլուր, ուր կազմակերպել է մի շարք ցուցահանդեսներ: Եղել է «Անի» ընկերության բարտուղարը: Նրա արխիվը գտնվում է Ն. Չարենցի անվան գրականության և արվեստի թանգարանում:

12

Արշակ Չոպանյանին

1926 թ., սեպտեմբեր 24, Փարիզ

Շատ սիրելի պ. Չոպանյան

Այսօր ստացա Մոսկվայից նամակ, որով հայտնում են, որ Նյու Յորքից նկարները շուտով ուղարկելու են Մոսկվա:

Շատ կիսնդրեմ Ձեզ, եթե դժվարություն չպատճառե, իմ վեց նկարներից երեքը ուղարկեք այստեղ փոստով, հանելով շասսիների վրայից¹:

Ես ռուսերեն կգրեմ, որ նկարները պետք է տան Ձեզ և որոնք պետք է ուղարկվեն Մոսկվա, այնտեղի ռուս ներկայացուցչին (թերթի մյուս կողմը):

Նկարները ուղարկել Բաշալյանի² անունով և նրա հասցեով: Նորից Ձեզ ցանկանում եմ բարի ճանապարհ և հաջողություն:

Խորին հարգանքներով Մարտիրոս Սարյան:

P.S. Եթե հնար լինի մեկ հատ կատալոգ էլ պատկերահանդեսի ուղարկեք ինձ:

Խորին հարգանքներով՝ Մ. Սարյան

„Russart New York“

mr. Doubrovski.

¹ Այդ ժամանակ Ա. Չոպանյանը հրավիրված է եղել ԱՄՆ, որտեղ մնացել է մինչև 1927 թ. կեսերը:

² Լևոն Բաշալյան (1868—1943).— գրող, ազգային, մշակութային գործիչ:

13

Արշակ Չոպանյանին

1927 թ. 12/5. Փարիզ

Շատ սիրելի պ. Չոպանյան,

Մի քանի օր առաջ պատահեցի պ. Հ[ովսեփ] Փուշմանին և նրանից իմացա, որ Դուք դեռ շուտով մտադիր չեք Փարիզ վերադառնալու, դառել եք իսկական ամերիկացի:

Փուշմանի ասածով Դուք Ամերիկայում ավելի երիտասարդացել եք ու Ձեր եռանդը կրկնապատկվել է:

Շատ ուրախ եմ, որ լավ եք զգում Դուք Ձեզ այդտեղ:

Ես ուզում եմ էլի մնալ Փարիզ, մինչև եկող գարունը: Հարկավոր է ավելի փարիզեցի դառնալ, որը գտնում եմ անհրաժեշտ նկարչի համար, քանի որ տեսներու և սովորերու բան շատ կա հոս:

Կամաց-կամաց աշխատում եմ, հրեմեն բավական եմ լինում, շատ բավական, հրեմեն տրամադրությունս ընկնում է, բայց ընդհանուր առմամբ տրամադրությունս ռազմական է, քանի որ առողջությունս էլ առաջվա վրա լավ է:

Երեք շաբթից հետո դուցի ալյստեղ մասնակցեմ մի խումբ ուսնակարիչների հետ քանի մը նկարներով:

«Անին» ուղում է պատկերահանդես կազմակերպել աշնանը:

Այս օրերս Երեանից մեր կերպարվեստագետների ընկերակցությունից նամակ ստացա, որի մեջ ինձ հայտնում են իրենց գործունեության մասին և ապագա անկիքների մասին: Դրանցից զխավորներն են սեփական շենք ունենալը և տարեկան մեկ ալմանախ հրատարակելը, նվիրված հայ արվեստի լուսաբանության հարցերին:

Իհարկե, մեր հայ մտավորականները միշտ իդեալիստ են եղել, դա ունի յուր լավ և վատ կողմերը, ինչպես Դուր գիտեք:

Հիմա այդ երկու միտքերը իրականացնելու համար, իհարկե, միջոցներ չունեն:

Իմ կարծիքով շենքի հարցը պետք է մի կողմ թողնել իհարկե, բայց հրատարակչության գործը դուցի հաջողվի, քանի որ ընկերությունը փոքրիկ գումար ունի, իհարկե ոչ բավարար, եթե դրան ավելացնել յոթ հարյուր կամ հազար դոլար, այդ գործը կարելի է ապահովված համարել, քանի որ մենք այդ տեսակ գործերի համար սովորած ենք ձրի աշխատել:

Այս բոլորը Ձեզ գրելուս նպատակն է հետևյալը. դուցի ի միջի այլոց այդտեղ մի լավ մարդ գտնեք, որի համար բավականություն պատճառե այդպես փոքրիկ դոմար մը տալ հայ արվեստի, կերպարվեստի ուսումնասիրության նվիրված գործին, որը մեղանում դեռ գոյություն չի ունեցել: Այդ գործը կազմակերպվում է մայր երկրում և հող կա տակին և մեկ հրատարակությունը կապահովի մյուս տարիները:

Այս բոլորը ինչոր գրում եմ, Ձեզ ոչ մի բանի չի պարտավորեցնում: Եթե հնար լինի, մի բան արեք: Հայաստանի կերպարվեստագետների (նկարիչների) ընկերությունը շատ-շատ շնորհակալ կլինի Ձեզ:

Ընդունեցեք հարգանքներս ու բարևներս, Ձերդ Մ. Սարյան

14

Արշակ Զուպանյանին

1927 թ. 30/11, Paris

Սիրելի պ. Զուպանյան,

Երեկ «Անի» ընկերության ժողովն էր: Խաչատրյանը ինձ խնդրեց, որ Ձեզ ուղարկեմ «Journal de Debat», ուր գրված է հոդվածը «Անի» նկարահանողների մասին:

Այդ հոդվածը, Ձեզ կխնդրեմ, ինձ վերադարձնեք օգտվելուց հետո: Ի միջի այլոց, եթե ուղենաք կարելի է օգտվել ևս ուսն թերթերում հոդվածներից, դրանք առանձին հետաքրքրություն են ներկայացնում մեզ հայերիս համար, իրեն կարծիք մի ժողովրդի, որի հետ կապված է մեր ներկա գոյությունը, դու-

ցե և ապագա առաջադիմությունը: Երկու թերթերի հատվածները թարգմանված կան Շիշմանյանի² մոտ: Նրա հասցեն կառավարողում կա:

Առիթից օգտվելով ուզում եմ Ձեզ հայտնել իմ առանձին շնորհակալությունը Ձեր դասախոսության համար, որը թե՛ բովանդակության և թե՛ որակի տեսակետից սքանչելի էր:

Ձեր հրաշալի հայերենը և հնչուն ձայնը ավելի նպաստեցին մեծ գրող Ե. Օտյանի արժեքները դրսևորելու: Այդ վերին աստիճանի պարզ և զեղեցիկ դասախոսությունը երկար ժամանակ կմնա իմ հիշողության մեջ:

Կարելի է միայն ցավ հայտնել, որ Ձեր ցանած սերմերը հայրենի հողի վրա չեն և այլասեռումի ճանապարհով գնացող գաղութներում միայն անհատներ գուցե պահեն իրենց սրտում կենդանի շողերը Ձեր խոսքերի:

Այսօր Արարատի ստորոտում հայ ժողովուրդը մերկ ժայռերի հետ կովելով, արյուն քրտինք թափելով նոր կյանք է ստեղծում, այնտեղ է հողը Ձեր ցանած սերմերի համար: Երբեք դա չմոռանաք և օր առաջ գնալու եք այնտեղ հիանալու և հիասթափվելու, բայց կենդանացած վերագաղթելու այստեղ և Ձեր ոսկի խոսքերը և հնչուն ձայնը գուցե մի քիչ կարողանան շարժել այստեղի քար սրտերը:

Խորին հարգանքներով և բարեններով՝ Ձերդ Մ. Սարյան

¹ Հայտնի է, որ հեղափոխությունից հետո Փարիզում ապրել են մեծ թվով ոռոս էմիգրանտներ, որոնք ունեցել են իրենց պարբերական մամուլը: Մ. Սարյանի հիշատակությունից երևում է, որ այդ թերթերի էջերում «Անի» ընկերության կազմակերպած ցուցահանդեսի մասին հորվածներ են լույս տեսել:

² Ռաֆայել Շիշմանյան (1885—1959).—անվանի արվեստագետ-նկարիչ, երկար տարիներ ապրել է Փարիզում, 1947 թ. եկավ Հայաստան: 1958 թ. երևանում հրատարակեց «Բնանկարն ու հայ նկարիչները» խորագրով արժեքավոր աշխատությունը: Մինչև մահ ապրեց Երևանում:

15

Արշակ Չոպանյանին

1927 թ. 7/12, Paris

Սիրելի պ. Չոպանյան,

Ձեք գրում: Մի՞թե դեռ չեք լավացել, այս գրությունս ստանալուն պես, էթե ժամանակ ունեք և լավ եք, նշանակեցեք ինքներդ ժամանակ և եկեք ինձ մոտ, սկսենք նկարել:

Ձեր հրավերը դերասան Աղամյանի² դասախոսության առթիվ ստացա մյուս օրը և դրա համար չկարողացա գալ:

Ես այստեղ պայմանավորվեցի արդեն մի galerie-ի հետ:

Charles Girard, 1, rue Edouard VII, և իմ նկարահանողնս կայանալու է փետրվար ամսի 4—18, 1928 թ.:

Այնպես որ իմ այստեղ մնալը երեք ամսվա հարց է:

Հարգանքներով՝ Ձերդ Մ. Սարյան

¹ Մ. Սարյանը Փարիզում գտնվելու ժամանակ (1926—1928) սերտ հարաբերության մեջ է եղել Ա. Չոպանյանի հետ, նկարել է նրան: Այդ դիմանկարը Մ. Սարյանի ուրիշ գործերի հետ ոչնչացել է նավի վրա պատահած հրդեհի ժամանակ:

² Խոսքը Չոպանյանի հերթական դասախոսության մասին է, որ նվիրված էր Պետրոս Աղամյանին (1849—1891):

Արշակ Չոպանյանին

1927 թ. 30/12. <Փարիզ>

Շատ սիրելի պարոն Չոպանյան,

Թույլ տվեք ինձ տալ Ձեզ մի քանի տեղեկություններ, որոնք մեծ չափով համապատասխանում են իրականին և թեթևացնելու են գրելու այն երկտողը, որ սիրալիաբար Դուք հանձն առիք:

Ես ծնվել եմ Ռուսաստանի հարավում, Նոր Նախիջևանում: Հայրիկիս հողագործ լինելուն պատճառով իմ մանկությունս անցկացրել եմ բնության մեջ ազարակում, շրջապատված հայ գյուղերով, որոնք զեռ պահած էին արևելյան կոլորիտը: Իմ մանկական կյանքը, որ անցկացրել եմ հայ և տեքրային գյուղերում, բնության մեջ, մեծ չափով ազդել են իմ ապագա աշխատանքների վերա: 1900 թվականներից սկսած երկար տարիներ եղել եմ Կովկաս, Անդրկովկաս, մասնավորապես Հայաստան: Ճանապարհորդել եմ Տաճկաստան, Եգիպտոս, Պարսկաստան, մոտիկից ուսումնասիրելու և ծանոթանալու թե՛ արևելյան կյանքին և թե՛ բնությանը:

Նկարչական և ընդհանուր կրթությունս ստացել եմ Մոսկվայում, որտեղ և սկսել եմ առաջին անգամ մասնակցել նկարահանողներում, սկսած 1902 թվականից: 1905—6 թվականներից սկսած իմ աշխատանքները սկսում են գրավել մեծ ուշադրություն գեղարվեստական շրջաններում և Մոսկվայի հասարակությունը մեծ ուշադրությամբ սկսում է հետևել իմ գործերին, հայտնելով թեր և դեմ կարծիքներ, ընկնելով ծայրահեղության մեջ:

1910 թվականին, առաջին անգամ, իմ նկարների առաջ բացվեցին Մոսկվայի հայտնի Tritelakoi-ի դալերիի՝ դռները, որը հետևանք էր այն մեծ հաջողությանը իմ նկարների բոլոր ճանապարհորդությունից հետո, ցուցադրված առաջնակարգ նկարահանողներում թե՛ Մոսկվայում և թե՛ Պետերբուրգում:

Բազմաթիվ գնահատականներ են գրված լավագույն ռուս քննադատների կողմից, ինչպես օրինակ Alexandre Benois,² Maximilian Volochin, S. Markovski³, Toukendhold⁴ և ես ճանաչված եմ իրրե ինքնուրույն արևելքի համար արևելյան նկարիչ:

Ռուսաստանի հեղափոխական շրջանում, 1921 թվականին տեղափոխվելով Խորհրդային Հայաստան՝ Երևան, շարունակում եմ արվեստը և միևնույն ժամանակ մասնակցում նոր մայրաքաղաքի կուլտուրական հիմնարկությունների կազմակերպման, շարունակ պահպանելով մշտական կապ Մոսկվայի գեղարվեստական կյանքի հետ:

Աչքի առաջ ունենալով իմ 25 [ամյա] գործունեությունը թե՛ արվեստի և թե՛ հասարակական գործունեության ասպարեզներում, Խորհրդ. Հայաստանի կառավարությունը որոշում է ինձ տալ «Ժողովրդական նկարիչ» տիտղոսը և հնարավորություն է տալիս մի տարով անցնել Ֆրանսա, Փարիզ, մոտիկից ծանոթանալու ֆրանսական մեծ արվեստին և միևնույն ժամանակ կազմավերելու հոս իմ գործերի նկարահանողները:

Մենամ խորին հարգանքներով և շնորհակալություններով Ձեզ սիրող

Մարտիրոս Սարյան

P. S. Երեքշաբթի առավոտ 8 1/2 կլինեմ Ձեզ մոտ:

1 Մոսկվայի Տրետյակովյան պատկերասրահը:

2 Իննուա Ալեքսանդր Նիկոլաևիչ (1870—1960).—նկարիչ, արվեստի պատմաբան-քննադատ:

3 Մակովսկի Սերգեյ Կոնստանտինովիչ (1877—1962).—խմբագիր «Ապոլլոն» պարբերականի, հրատարակիչ, նկարիչ Կոնստանտին Մակովսկու որդին:

4 Թուկենդհոլդ (1882—1928).—արվեստի տեսաբան:

17

Արշակ Չուպանյանին

1928, 24—III

Մ. Սարյան, Երևան, Խուբենի 55

Սիրելի պարոն Չուպանյան,

Երկու շաբաթ է ինչ որ Երևանում եմ, ընտանիքս առողջ գտա, երեխաներս մեծացած:

Քաղաքը մեծ չափով փոխվել է, մի շարք գեղեցիկ ոճով տներ են շինված. նայելով դրան բնակարանային կրիդիսը շատ մեծ է:

Հայաստանում մասնավորապես, ինչպես և ամբողջ Անդրկովկասում այս տարի շտեպնված և շլտված ձմեռ է, սարերում և ձորերում աներևակայելի քանակությամբ ձյուն է եկել, այնպես որ հեղեղումների վտանգ կա, եթե այդ ձյունը առաջ սկսի հալել: Գարնանացանքսերը շատ են ուշանում և կերի պակասության պատճառով եղջյուրավոր անասունները կսկսեն կոտորվել:

Կառավարության կողմից բոլոր միջոցները ձեռք են առնվում, ինչպես, օրինակ, անասուններին կեր մատակարարելը և հեղեղների առաջը առնելը:

Փարիզից ուղարկված նկարներս դեռ չեմ ստացել, բայց տեղեկություններ կա, որ արդեն հասել են Բաթում:¹

Երևանում մտադրություն կա մայիսի մեկին բաց անել նկարահանդես: Մոսկվայից հրավեր ունեի մասնակցելու մեկ մեծ նկարահանդեսին, բայց նկարներս չստանալու պատճառով հրաժարվելու եմ:

Սպասում եմ գարնանը, որ սկսեմ նկարել Երևանի ծաղկաղարդ գարունը:

Ի միջի այլոց Ձեզինց մի խնդիրք ունեմ. Հայաստանի Կարմիր խաչի գլխավոր վարչությունը դիմելու է վիզայի վերաբերյալ բժիշկ Ներսես Հակոբյանի յուր կնոջ հետ՝ Եվգինե ու երկու տարեկան երեխով²: Բժիշկը գործուղվում է Փարիզ մի երկու տարով սովորելու համար: Իմ կողմից հատկապես կըխնդրեի Ձեզ, որ Դուք ամեն կերպ աջակցեիք վերոհիշյալ անձնավորությունների վիզա ձեռք բերելու գործին, քանի որ երիտասարդ բժիշկը գալիս է արտասահման կատարելագործվելու համար:

Ձեր հոգվածները իմ նկարահանդեսի մասին չունեմ, շատ կցանկանայի. եթե դժվար չէ, ուղարկեք ինձ:

17 Հանդես, № 1

Սպասում եմ Ձեր նամակին, ինչպես եք, ինչպես է գնում Մուլոյի երրորդ գրքի հրատարակությունը և այլն:

Հնդունեցեք սիրալիր բարևներս, Ջերմ Մ. Սարյան

¹ Խոսքը հրդեհի ճարակ դարձած նկարների մասին է, որին այդ ժամանակ դեռևս անտեղյակ էր Մ. Սարյանը:

² Բժիշկ Ներսես Բաբայի Հակոբյան (1892—1954).— հետագայում Երևանի բժշկական ինստիտուտի ուսկույր:

18

Արշակ Չոպանյանին

Երևան, 25—8—1928 թ.:

Սիրելի պարոն Չոպանյան,

Շատ շնորհակալ եմ Ձեր սիրալիր նամակին, առանձնապես շնորհակալ եմ Ձեզ, որ Դուք չեք մոռանում ինձ:

Երեկ գնացել էի Հանրային գրադարան՝ իմանալու Ձեր որ գրքերից և ինչ քանակությամբ կան գրադարանում: Ինձ խոստացան մի քանի օրից ամենաճշգրիտ տեղեկությունը տալ:

Հենց որ ստանամ այդ տեղեկությունը անմիջապես Ձեզ կհայտնեմ փակ կամ բաց նամակով և Դուք տեղյակ կլինեք Ձեր գրքերի մասին:

Արդյոք Ձեր նամակի հետ Դուք ուղարկե՞լ էիք «Ապագայի»¹ մեջ տպագրված իմ մասին հոդվածները, թե՞ ոչ²:

Ես դեռ սուր կերպով չեմ զգացել իմ նկարների կորուստը, ինձ թվում է, թե նրանք ճանապարհին են և օր մը կստանամ հալբաթ³:

Ավելի զգալի է այն հանգամանքը, որ նկարչական պիտույքները պակաս են և սպասում ենք Փարիզից:

Ստացա Ձեր նամակից մի քանի օր առաջ և պ. Քելեկյանի⁴ նամակը, իսկույն հասկացա, որ Դուք ինձ չեք մոռացել:

Այս հարցը գուցե հնարավոր լինի լուծել այս ձևով, Փարիզում տիկին Աննա Բուդաղյանի մոտ⁵ (որուն հետ Դուք շատ լավ ծանոթ եք) ես թողել եմ 5 նկար, որից մեկը ծախված է արդեն, իսկ չորսը դեռ նրա մոտ է, ես այդ գործերը հենց այդ հույսով էլ թողել էի, գուցե մեկը ուղենա գնել:

Շատ կիսնդրեմ Ձեզ պայմանավորվելիք պարոն Քելեկյանի հետ գնալ տ. Բուդաղյանի մոտ և տեսնել այդ նկարները, որոնցից երկուսը ուժեղ նկարներից են՝ 1) «Հայկական դյուղ» և 2) «Կովկասյան քաղաքի փողոց. Շող օր», կա և nature morte, որը ճաշակի հարց է:

Եթե հաջողվի այդ նկարների գնումը, այն ժամանակ տ. Բուդաղյանը անմիջապես կուղարկի ինձ նկարչական պիտույքներ, ցուցակը ես նրան ուղարկել եմ, կարծեմ որ շուրջ հազար ֆրանքի հարց է:

Համենայնդեպս Դուք կիսնդրեի խոսելիք տիկին Բուդաղյանի հետ նախօրոք սլավոնավորվելով գնի մասին, ինձ հետաքրքրում են միայն նկարչական պիտույքները, փողի կարիք չունեմ:

Ներեցեք, որ Ձեր գլուխը ցավեցնում եմ մանր-մունր հարցերով:

Շատ եմ փոշմանել, որ Ձեր կենդանագիրը շթողի Ձեզ մոտ: Ճակատագիր է էլի: Ինչ արած, մեր ժողովուրդը եթե որ մի իր է կորցնում, ասում է. «Զարը պրանով անցնի»:

Ընդունեցեք իմ անկեղծ սիրո հետ և իմ անկեղծ բարեկներս

Ձերդ Մ. Սարյան

1 «Ապագա».—բաղաբական և հասարակական շարաթաթերթ, ապա եօրյա, օրգան ռամ-կավարական-ազատական կուսակցության (ԽԱԿ-ի), յույս է տեսել 1921—1934 թթ. Փարի-դում, իմբագրական կազմ՝ Հ. Պողոսյան, Ա. Չոպանյան, Ա. Թերզիպաշյան և ուրիշներ:

2 Մ. Սարյանը Փարիդում ապրած ժամանակ (1926—1928) ունեցել է անձատական ցու-ցանդեաներ և մասնակցել այլ ցուցահանդեսների: Այդ մասին Ա. Չոպանյանը հոդվածներ է տպագրել «Ապագայում» (տե՛ս «Ապագա», 1927, № 40, 1928, № 15):

3 Նավի հրդեհին զո՛ւ է գնացել շուրջ 40 նկար:

4 Հավանորեն խոսքը նկարիչ Ատեն Քելբեյանի մասին է, որը մասնակցել է «Անի» ընկե-րության ցուցահանդեսներին:

5 Աննա Բուդաղյան (1880—1964).—Թատերական-մշակութային գործիչ:

19

Աննա Հովհաննիսյանին

1936,5-XI. Ереван

Дорогая Анна Иоановна!¹

Вы меня очень обрадовали Вашим письмом, оно как раз кстати.

Очень Вам благодарен, что Вы не забыли обо мне и хотите мне помочь. И я с нетерпением буду ждать ответа на мое письмо.

Очень признателен Юрию Николаевичу², что он охотно согласился дать мне «археологический» материал, надеюсь к 20-му ноября от Вас получить ответ³.

Меня Пушкин интересует в период своего пребывания в Армении, «путешествия в Арзрум». Встреча его с телом А. С. Грибоедова, по-моему, недалеко от Бызовдальского перевала. Интересно увязать Пушкина с армянским пейзажем с арбой, быками и фигурами армян (неправильно принятых им за грузин).

Значит, меня интересует наряд его, т. е. головной убор, какие сапоги, костюм, верхнее платье. Сам Пушкин дает кое-какие сведения. Он говорит, что «туго натянул ремни бурки и накинул на картуз башлык...» (из «Путешествия в Арзрум»). Значит, бурка, башлык, картуз, меня очень интересует тогдашняя форма *картуза*; если Вы мне пришлете этот материал, как остроумно выразился Ю. Н., «археологический», я Вам буду премного обязан. Во всяком случае это очень полезно и в том отношении, чтоб археологи-пушкинисты не упрекнули бы нашего брата от искусства в невежестве и т. п.

Наперед приношу свою благодарность Вам и Юрию Наколаевичу за содействие, так что доля работы в случае удачи будет принадлежать и Вам.

У нас чудесные, золотые солнечные осенние дни. Но иногда дож-

дит, надо сказать, что этот год очень дождливый. Снеговая линия на Араратах спустилась очень низко.

Ինչպես երևում է, Մասիսի գլխին հաճիտյան նստած ձմեռը քստ սովորության այս տարի էլ կփռի յուր սպիտակ փեշերը Արարատյան դաշտի վրա: Солнечно в нашем грустном городе.

Сердечный привет Вам, Юрию Николаевичу и многим ленинградцам, окутанным туманом, из солнечного города Еревана.

Лусик⁴ шлет привет и поцелун.

Ваш М. Сарьян. Жду ответа.

¹ Աննա Հովհաննիսյան (1899—1977).—Քարգմանչուհի, բանաստեղծ Հ. Հովհաննիսյանի դուստրը: Երկար տարիներ ապրել և աշխատել է Մոսկվայում ու Լենինգրադում:

² Խոսրո Նիկողայոս Մանի որդու՝ արևելագետ, իրանագետ Յուրի Նիկոլաևիչ Մանի (1893—1935) մասին է:

³ Ինչպես երևում է Մ. Սարյանի նամակից, նա ցանկություն է ունեցել Պուշկինի «Ճանապարհորդություն դեպի Էրզրում» ստեղծագործության թեմայով մի կոմպոզիցիոն կտավ նկարել, այդ նպատակով էլ Աննա Հովհաննիսյանի միջոցով դիմել է Յուրի Նիկոլաևիչին, որպեսզի նա օգնի իրեն ժամանակի զգեստների բնույթը պարզելու հարցում:

⁴ Լուսիկ Սարյան—Մ. Սարյանի կինը՝ զրոգ Ղազարոս Աղայանի դուստրը:

ИЗ НЕОПУБЛИКОВАННЫХ ПИСЕМ МАРТИРОСА САРЬЯНА

Г. А. АЗНАВУРЯН

(Резюме)

Публикуемые письма Мартираса Сарьяна (всего 19) содержат интересные факты и ценные сведения о культурной жизни Армении в первые десятилетия Советской власти, об искусстве, творчестве художника. Эти письма, адресованные деятелям культуры того времени, хранятся в фондах Музея литературы и искусства им. Е. Чаренца.